



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

13.09.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/61

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար սողնակների, կափույրների և փականների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 20.08.2019թ. ներկայացված (21.08.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/61 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 20.08.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու՝ նաև Ընթացակարգ), որին մասնակցելու

նպատակով հայտ է ներկայացրել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերությունը կոնսորցիումով «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության հետ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17 հունիսի 2019թ. թիվ 4 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող՝ 2, 4, 7, 9 չափաբաժիններով:

Թիվ 4 արձանագրության 8-րդ կետով արձանագրել է, որ «Ընկերության ներկայացված նմանատիպ պայմանագրի շրջանակներում մատակարարումն իրականացված է ժամկետի խախտմամբ (պայմանագիրը համարվում է ոչ պատշաճ կատարված)՝ պայմանագրով սահմանված է 20 օր ստորագրման պահից հաշված, որը լրանում է 02.05.2019թ., իսկ մատակարարումն իրականացվել է 03.05.2019թ: Քանի որ թիվ 7 չափաբաժնի համար առաջարկվում է համարժեք փական, ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող փականի երկրաչափական չափսերը և նշել թե ինչ միջավայրերի համար է նախատեսված:

Գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և առաջարկել Ընկերությանը 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված խախտումը:

Թիվ 4 արձանագրության 8-րդ կետով արձանագրված խախտումը Ընկերությունը շտկել է սահմանված ժամկետում:

Գնահատող հանձնաժողովը 21.06.2019թ. թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետով որոշել է՝ առաջնորդվելով ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով և 6-րդ մասով մերժել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերության և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության կոնսորցիումի հայտը, հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերությունը «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության հետ կոնսորցիումով հանդես է եկել նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռք բերման համար հրապարակված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-11/19» ծածկագրով գնման ընթացակարգին:

Թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետով նաև որոշել է առաջարկել «Մամլիչ-ՆԿ» ՍՊ ընկերությանը ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը թիվ 2 և 4, АО ПИК «Энерготраст» թիվ 7 եւ ИП Амбарцумян Хачатур Сережаевич թիվ 9 չափաբաժինների համար:

Թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետը դադարեցնելու պահանջով Ընկերությունը 01.07.2019թ. բողոք էր ներկայացրել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, որը բավարարվել էր 30.07.2019թ. ԳԲՔԱ-ԼՕ-2019/50 որոշմամբ և թիվ 4.1 արձանագրությունը դադարեցվել է:

«ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 4.1 արձանագրության դադարեցումից հետո, գնահատելով մասնակիցների հայտերը 08.08.2019թ. թիվ 5 արձանագրության 9-րդ կետով որոշել է մերժել Ընկերության հայտը՝ պատճառաբանելով, որ «Ընկերությունը չի ներկայացրել պայմանագրի ժամկետի փոփոխման վերաբերյալ հիմնավորում կամ նմանատիպ պայմանագիր» և առաջարկել «Մամլիչ-ՆԿ» ՍՊ ընկերությանը ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը թիվ 2 և 4, АО ПИК «Энерготраст» թիվ 7 և ИП Амбарцумян Хачатур Сережаевич թիվ 9 չափաբաժինների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն օրենքի նպատակն է ի թիվս այլի՝ գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.06.2019թ. թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետով որոշել էր Ընկերության հայտը մերժել ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով և 6-րդ մասով, նկատի ունենալով, որ «Էյջ Զի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերությունը կոնսորցիումով «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության հետ հանդես է եկել նաև «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-11/19» ծածկագրով գնման ընթացակարգին:

4.1 արձանագրության նույն որոշմամբ գնահատել է, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերին և օրենքով սահմանված պահանջներին, այսինքն՝ 17.06.2019թ թիվ 4 արձանագրության 8-րդ կետով պահանջված փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացվել են շտկված տարբերակով:

21.06.2019թ 4.1 արձանագրության դադարեցումից հետո, (ի դեպ 4.1 արձանագրությունը դադարեցվել է, քանի որ այն ստորագրված չի եղել օրենքով սահմանված կարգով) առկա փաստաթղթերի առկայության պարագայում գնահատող հանձնաժողովը հայտը մերժել է այն պատճառաբանությամբ, որ Ընկերությունը չի ներկայացրել պայմանագրի ժամկետի փոփոխման վերաբերյալ հիմնավորում կամ նմանատիպ պայմանագիր:

Ուշագրավ իրողություն է, որ գնահատող հանձնաժողովը միտված է Ընկերության հայտը մերժել ցանկացած դեպքում: Հանձնաժողովի ընդգծված վերաբերմունքը Ընկերության նկատմամբ ակնհայտ է, քանի որ երկու դեպքում էլ մերժումների իրավական հիմքը բացակայում է: Գնահատող հանձնաժողովը, եթե վստահ լիներ իր գործողությունների օրինականության հարցում ապա 08.08.2019թ. թիվ 5 արձանագրությամբ կրկին կմերժեր ՀՀ հարկային օրենսգրքի նույն դրույթներով:

Ընկերության ներկայացրած փաստաթղթերը, այդ թվում՝ շտկված փաստաթղթերը, որոնք վերաբերվել են նաև նմանատիպ պայմանագրին, գնահատող հանձնաժողովը դեռևս 21.06.2019թ. թիվ 4.1 արձանագրությամբ գնահատել է բավարար:

08.08.2019թ. թիվ 5 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը կարծես թե վերագնահատել է Ընկերության փաստաթղթերը և որոշել, որ դրանք չեն համապատասխանում օրենքով և հրավերով սահմանված պահանջներին: Գնահատող հանձնաժողովը ոլորտը կարգավորող իրավական ակտերով չունի փաստաթղթերը վերգնահատելու իրավասություն:

Եթե Ընկերությունը գնահատող հանձնաժողովի պահանջած փաստաթղթերի շտկված տարբերակը չէր ներկայացրել կամ թերի էր ներկայացրել, ապա ինչու 4.1 արձանագրությամբ չէր որոշել հենց այդ հիմքով մերժել Ընկերության հայտը, այլ մերժել էր ՀՀ հարկային օրենսգրքի ինչ-որ նորմով: Եթե 4.1 արձանագրությամբ որոշվել է, որ Ընկերության ներկայացրած փաստաթղթերը բավարարում են օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, ապա գնահատող հանձնաժողովը ինչու է 08.08.2019թ. թիվ

5 արձանագրությամբ որոշել, որ դրանք չեն համապատասխանում պահանջվող փաստաթղթերի ցանկին: Տրամաբանորեն հարց է առաջանում, արդյո՞ք գնահատող հանձնաժողովը որոշել է ամեն կերպ մերժել Ընկերության հայտը, շրջանցելով օրենքի և հրավերի պահանջները:

Գնահատող հանձնաժողովը կարծես հակված է գործելու՝ չղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և 526-Ն որոշմամբ:

Գնահատող հանձնաժողովն իրավասու չէր նույնիսկ 17.06.2019թ. թիվ 4 արձանագրության 8-րդ կետով որոշել, որ Ընկերության ներկայացրած նմանատիպ պայմանագրի շրջանակում մատակարարումն իրականացվել է ժամկետի խախտմամբ և լրացուցիչ անհիմն պահանջ ներկայացնել Ընկերությանը:

Նմանատիպ պայմանագրի պատշաճ կատարման հարցը գնահատող հանձնաժողովը մեկնաբանել է խիստ սուբյեկտիվ և մեկնաբանությունը չի բխում օրենքից, ավելին՝ գնահատող հանձնաժողովն իրավասու չի եղել մեկնաբանել նմանատիպ պայմանագրով նախատեսված ժամկետները պայմանագրի այլ դրույթներից տրոհված և գնահատման ենթակա հարցի տիրույթից դուրս:

Նմանատիպ պայմանագրի պատշաճ կատարման հավաստումը հրավերով սահմանված է այլ փաստաթղթերի առկայությամբ: Համաձայն հրավերի 3.1 մասի 1-ին կետի «բ» ենթակետի՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ներկայացված նմանատիպ պայմանագրին կից ներկայացվել է դրա պատշաճ կատարումը հավաստող՝ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Անդրադառնալով 12 ապրիլի 2019 թվականին կնքված նմանատիպ պայմանագրով սահմանված ժամկետներին, Ընկերությունը հայտնել է հետևյալը. ներկայացված պայմանագրով սահմանված են մի քանի ժամկետներ, որոնք կողմերի համար

տարընկալում չի առաջացնում, քանի որ պայմանագրով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով, բացառությամբ 5.3 կետով նախատեսված ժամկետի, որով հստակ նշված է, որ այն հաշվարկվում է օրացույցային օրերով, իսկ մնացած դեպքերում ժամկետները կողմերն ընդունել են, որ պետք է հաշվարկեն աշխատանքային օրերով:

Ասվածի վկայումն է, որ մատակարարումն ընդունող անձը 04.05.2019թ. հավաստմամբ փաստում է, որ մատակարարումն իրականացվել է 12.04.2019թ. պայմանագրի պահանջներին համապատասխան:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, «Գնումների մասին» ՀՀ օրենքը և շրջանցել է իր իսկ ներկայացրած հրավերի պահանջները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 5 արձանագրությամբ պետք է արձանագրեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի այն նորմը և/կամ 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի այն կետը, որով իրավասու էր ղեկավարվել՝ Ընկերության հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս:

Ի լրումն բողոքի 10.09.2019թ. ներկայացված գրությամբ Ընկերություն հայտնել է, որ «Հայկական Ատոմային Էլեկտրակայան» ՓԲ ընկերությունը ԳԲՔԱ-ՆԳ-2019/61 բողոքի առնչությամբ դիրքորոշում է հայտնում է, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն ներկայացրած փաստաթղթերում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մեկը վերաբերել է ներկայացված նմանատիպ պայմանագրի անճշտությանը, որն արձանագրել էր թիվ 4 արձանագրությամբ և այն շտկելու համար տրվել էր մեկ աշխատանքային օր:

Երկրորդ անհամապատասխանությունը վերաբերել է 7-րդ չափաբաժնին, որի վերաբերյալ Ընկերությունը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովը գնահատել է բավարար:

Ինչ վերաբերում է նմանատիպ պայմանագրի շտկմանը, ապա Ընկերությունը հայտնել է, որ ներկայացված է եղել պատշաճ կնքված և պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող՝ հրավերով նախատեսված փաստաթղթեր, ուստի նմանատիպ պայմանագրի

շտկման կամ դրա մեկնաբանման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի պահանջն օրինաչափ չի եղել, քանի որ այն չի բխել «Գնումների մասին» ՀՀ օրենքից, 526-Ն որոշումից և հրավերով նախատեսված պահանջներից: ԳԲՔԱ-ՆԳ-2019/61 բողոքի առնչությամբ ներկայացրած դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտարարում է, որ բողոքաբերի ներկայացրած հայտարարությունները չեն համապատասխանում իրականությանը, ապա Ընկերությունը հայտնել է, որ դա Ընկերության կողմից ներկայացրած պարզապես հայտարարություն չէ, այլ արձանագրված փաստ, որն արձանագրվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 4 և 4.1 արձանագրությամբ:

✓ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 4 արձանագրությամբ Ընկերությունից պահանջել է ներկայացնել շտկված փաստաթղթերը (տես՝ 4 արձանագրությունը):

✓ Սահմանված ժամկետում Ընկերությունը ներկայացրել է հանձնաժողովի կողմից պահանջված փաստաթղթերը:

✓ Հանձնաժողովը 4.1 արձանագրությամբ մերժել է Ընկերության հայտը ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով և 6-րդ մասով (դիրքորոշմամբ վկայակոչում է, որ մերժման հիմք է հանդիսացել ՀՀ ֆինանսների նախարարության 01.1/26-1/10386-2019 առ 21.06.2019թ. պարզաբանումը): 21.06.2019թ. նիստի 4.1 արձանագրությամբ հանձնաժողովը չի արձանագրել, որ Ընկերության ներկայացրած շտկված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, այլ հայտի մերժման մեկ այլ հիմք է վկայակոչել, մինչդեռ պետք է արձանագրվեին բոլոր անհամապատասխանությունները, մերժման հիմքերը, եթե այդպիսիք եղել են:

✓ Ընկերությունը 4.1 արձանագրությունը բողոքարկել է և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.07.2019թ. որոշմամբ դադարեցվել է 4.1 արձանագրությունն ամբողջությամբ:

✓ 08.08.2019թ թիվ 5 արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը դեռևս թիվ 4 արձանագրությամբ պահանջված և ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Այն, որ հանձնաժողովը ոչ իրավաչափ է գործում այլևս ակնհայտ է (դրա վկայումն է նաև 30.07.2019թ. որոշումը): Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովն ընդգծված վերաբերմունք է դրսևորում Ընկերության նկատմամբ, Ընկերությունը վստահաբար հայտնում է, որ դիտավորությամբ, անհիմն կերպով «մերժման հիմքեր» է որոնում, մինչդեռ՝ պետական համակարգի շահով պետք է առաջնորդվի՝ ղեկավարվելով ոլորտի օրենսդրական կարգավորումներով և առկա փաստական հանգամանքներն ու փաստաթղթերն այդ նորմերի համակցության մեջ գնահատելով:

✓ Եթե գնահատող հանձնաժողովը վստահ է, որ իր գործողությունների արդյունքում կայացրած որոշումներն օրինական են և առաջնորդվում է բացառապես օրենքով, ապա ողջամտորեն հարց է առաջանում, 4.1 արձանագրությունը դադարեցնելուց հետո, ինչու է այլ հիմքեր որոնել Ընկերության հայտը մերժելու համար, չէ որ ՀՀ ֆինանսների նախարարության 01.1/26-1/10386-2019 առ 21.06.2019թ պարզաբանումն է հիմք հանդիսացել Ընկերության հայտը մերժելու համար, արդյո՞ք այդ պարզաբանումն այլևս անօրինական է կամ այդ պարզաբանումն ի սկզբանե հիմք չի կարող հանդիսանալ Ընկերության հայտը ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով և 6-րդ մասով մերժելու համար:

✓ Հանձնաժողովի այն դիտարկումը, որ Ընկերության ներկայացրած նմանատիպ պայմանագիրը համարվում է ոչ պատշաճ կատարված, քանի որ մատակարարումն իրականացվել է ժամկետի խախտմամբ, Ընկերությունը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովը, նախ՝ պայմանագրով սահմանված ժամկետները սխալ է մեկնաբանել և հանձնաժողովը պայմանագրի ժամկետների մեկնաբանություն անելու իրավասու չի եղել, քանի որ՝

1. Նմանատիպ պայմանագրի պատշաճ կատարման հավաստումն արձանագրվում է հրավերով սահմանված փաստաթղթերի առկայությամբ: Համաձայն հրավերի 3.1 մասի 1-ին կետի բ) ենթակետի՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ընկերությունը նմանատիպ պայմանագրին կից ի թիվս այլ փաստաթղթերի ներկայացրել է տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը: Ասվածի վկայումն է, որ մատակարարումն ընդունող անձը 04.05.2019թ. հավաստմամբ փաստում է, որ մատակարարումն իրականացվել է 12.04.2019թ. պայմանագրի պահանջներին համապատասխան (ներկայացվել է գնահատող հանձնաժողովին):

Այս փաստաթղթի առկայության դեպքում ո՞ր իրավական նորմով է առաջնորդվել հանձնաժողովը և ներկայացված նմանատիպ պայմանագիրը գնահատել ժամկետի խախտմամբ կատարված:

2. Ինչ վերաբերվում է հանձնաժողովի կողմից պայմանագրի ժամկետների մեկնաբանմանը, ապա այն նույնպես ճիշտ չի մեկնաբանվել: Ներկայացված պայմանագրով սահմանված են մի քանի ժամկետներ, որոնք կողմերի համար տարընկալում չի առաջացնում, քանի որ պայմանագրով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով, բացառությամբ 5.3 կետով նախատեսված ժամկետի, որով հստակ նշված է, որ այն հաշվարկվում է օրացույցային օրերով, իսկ մնացած դեպքերում ժամկետները կողմերն ընդունել են, որ պետք է հաշվարկեն աշխատանքային օրերով:

✓ Ինչ վերաբերում է այն գրությանը, որով Ընկերությունը գնահատող հանձնաժողովին հայտնել է, որ «կից ուղարկվում է պայմանագրում փոփոխություն անելու վերաբերյալ համաձայնագիրը, սակայն այն չի կցվել տեխնիկական պատճառներով» Ընկերությունը հայտնել է, որ այդ բովանդակությամբ էլեկտրոնային նամակ ուղարկվել է գնահատող հանձնաժողովին, սակայն Ընկերությունը նկատի է ունեցել, որ կից պետք է ներկայացնի որպես նմանատիպ պայմանագիր ներկայացված 12.04.2019թ. պայմանագրի մատակարարումն ընդունող անձի 04.05.2019թ. հավաստումը, կարծելով, որ այն չի ներկայացրել: Սակայն հետագայում պարզելով, որ այն ներկայացրել է, ուստի 2-րդ անգամ նույն փաստաթուղթը չի ներկայացրել: Ինչ վերաբերում է 12.04.2019թ. պայմանագրում փոփոխություն անելու վերաբերյալ համաձայնագրին, ապա Ընկերությունը նկատի է ունեցել պայմանագրի ժամկետների գրավոր այն մեկնաբանությունը, որը ներկայացրել է և՛ բողոքով, և՛ սույն վերլուծությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար եւ մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)։

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Հրավերի 3.1 մասի 1-ին կետի բ) ենթակետի համաձայն՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Նմանատիպ պայմանագրին կից գնահատող հանձնաժողովին ներկայացվել է 04.05.2019թ. գրավոր հավաստումը 12.04.2019թ. պայմանագրի պատշաճ հավաստման վերաբերյալ:

«Էյջ Զի Էյջ Քոնփանի» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.08.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Պատվիրատուի կարիքների համար սողնակների, կափույրների և փականների ձեռքբերման նպատակով 13.05.2019թ. հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթը, որին թիվ 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11 չափաբաժինների մասով մասնակցության հայտ է ներկայացրել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն՝ կազմելով կոնսորցիում Վրաստանի ռեզիդենտ հանդիսացող «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի հետ:

Մասնակցության հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. թիվ 3 որոշմամբ 2-րդ, 4-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների համար ցածր գնային առաջարկով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի կոնսորցիումը (հետայսու նաև՝ Կոնսորցիում) և սահմանված կարգով առաջարկվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավրով սահմանված փաստաթղթերը: Որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ հրավերին, մասնավորապես.

- Ներկայացված նմանատիպ պայմանագրի շրջանակներում մատակարարումն իրականացված է ժամկետի խախտմամբ (պայմանագիրը համարվում է ոչ պատշաճ կատարված)՝ պայմանագրով սահմանված է 20 օր ստորագրման պահից հաշված, որը լրանում է 02.05.2019թ., իսկ մատակարարումն իրականացվել է 03.05.2019թ.

- Քանի որ թիվ 7 չափաբաժնի համար առաջարկվում է համարժեք փական ճիշտ գնահատման համար առաջարկվել է ներկայացնել առաջարկվող փականի երկրաչափական չափերը և նշել, թե ինչ միջավայրերի համար է նախատեսված:

Ի կատարումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-ր մասի և 34-րդ հոդվածի և առաջնորդվելով ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով և 6-րդ մասով՝ 21.06.2019թ. թիվ 4 արձանագրությամբ հանձնաժողովը մերժել է Կոնսորցիումի հայտը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ընկերությունները կոնսորցիումով հանդես են եկել նաև Պատվիրատուի կարիքների համար պաշտպանիչ

միջոցների ձեռքբերման համար հրապարակված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-11/19» ծածկագրով գնման ընթացակարգին:

Պատվիրատուն հայտնել է, որ Կոնսորցիումի հայտը մերժվել է, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է 01.1/26-1/10386-2019 առ 21.06.2019թ. պարզաբանումը:

Ի պատասխան բողոքաբերի այն հայտարարությանը, որ Կոնսորցիումի հայտը սույն թվականի հունիսի 21-ին թիվ 4.1 արձանագրությամբ գնահատվել է բավարար, Պատվիրատուն հայտնել է, որ դա չի համապատասխանում իրականությանը: Սույն թվականի հունիսի 21-ի նիստի ժամանակ հանձնաժողովը չի անդրադարձել Կոնսորցիումի կողմից ներկայացված շտկումներին (որի մասին վկայում է թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետը, որտեղ նշված է, որ փաստաթուղթն առկա է, սակայն գնահատված չէ բավարար)՝ ելնելով այն հանգամանքից, որ առաջացած իրավիճակում Կոնսորցիումի հայտն այլևս ենթակա չէր դիտարկման համաձայն ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված վերոգրյալ պարզաբանման (ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման հավելված 1-ի 33-րդ կետի 8-րդ ենթակետ):

Ի կատարումը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/50 բողոքի շրջանակներում 30.07.2019թ. կայացրած որոշման, ս/թ օգոստոսի 8-ի թիվ 5 արձանագրությամբ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը դադարեցրել է 21.06.2019թ. թիվ 4.1 արձանագրությունն ամբողջությամբ: Նույն նիստի ժամանակ անդրադառնալով Կոնսորցիումի ներկայացրած շտկումներին հանձնաժողովն արձանագրել է, որ Կոնսորցիումի կողմից չի ներկայացվել պայմանագրի ժամկետի փոփոխությունն արձանագրող փաստաթուղթ կամ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 61-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված որևէ փաստաթուղթ կամ այլ պայմանագիր: Սակայն շտկման ներկայացման էլեկտրոնային նամակում մասնակիցն ընդունում է, որ տեղի է ունեցել վրիպակ և չի ներկայացվել երկկողմ հաստատված համաձայնագիրը:

Պատվիրատուն գտնում է, որ Ընկերության բողոքն անհիմն է, քանի որ Կոնսորցիումը խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտականությունները, այն է՝ սահմանված ժամկետում չի շտկել գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, իսկ Օրենքը և Կարգը հնարավորություն

չեն ընձեռնում երկրորդ անգամ շտկում ներկայացնելու: Գնահատող հանձնաժողովն առաջնորդվել է բացառապես Օրենքով և Կարգով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 26.08.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/61 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումը Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ. մասնավորապես՝ Կոնսորցիումի կողմից ներկայացված ներկայացված նմանատիպ պայմանագրի շրջանակներում մատակարարումն իրականացված է ժամկետի խախտմամբ (պայմանագիրը համարվում է ոչ պատշաճ կատարված)՝ պայմանագրով սահմանված է 20 օր ստորագրման պահից հաշված, որը լրանում է 02.05.2019թ., իսկ մատակարարումն իրականացվել է 03.05.2019թ.: Քանի որ թիվ 7 չափաբաժնի համար առաջարկվում է համարժեք փական, ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող փականի երկրաչափական չափսերը և նշել, թե ինչ միջավայրերի համար է նախատեսված:

Կոնսորցիումին ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի թիվ 4.1 արձանագրության համաձայն՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի հետ հանդես է եկել կոնսորցիումով նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված այլ գնման ընթացակարգին:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի թիվ 4.1 արձանագրությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.07.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/50 որոշման հիման վրա ամբողջությամբ դադարեցվել է: Նույն արձանագրության համաձայն՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ Կոնսորցիումի կողմից չի ներկայացվել նմանատիպ պայմանագրի ժամկետի փոփոխման վերաբերյալ հիմնավորում կամ այլ նմանատիպ պայմանագիր:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 20.08.2019թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանվում են մասնակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չափանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3)

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթի մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Էյջ Զի Էյջ Քոնփանի» ՍՊ և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊ

ընկերությունների կոնսորցիումը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության կայացված որոշմամբ Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Կոնսորցիումի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ. մասնավորապես՝ Կոնսորցիումի կողմից ներկայացված ներկայացված նմանատիպ պայմանագրի շրջանակներում մատակարարումն իրականացված է ժամկետի խախտմամբ (պայմանագիրը համարվում է ոչ պատշաճ կատարված)՝ պայմանագրով սահմանված է 20 օր ստորագրման պահից հաշված, որը լրանում է 02.05.2019թ., իսկ մատակարարումն իրականացվել է 03.05.2019թ.: Քանի որ թիվ 7 չափաբաժնի համար առաջարկվում է համարժեք փական, ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող փականի երկրաչափական չափսերը և նշել, թե ինչ միջավայրերի համար է նախատեսված:

Կոնսորցիումին ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունները շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի թիվ 4.1 արձանագրության համաձայն՝ «Էյջ Զի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ «Էյջ Զի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի հետ հանդես է եկել կոնսորցիումով նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված այլ գնման ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.08.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ. նիստի թիվ 4.1 արձանագրությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.07.2019թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/50 որոշման հիման վրա ամբողջությամբ դադարեցվել է: Նույն արձանագրության համաձայն՝ «Էյջ Զի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժվել է, այն հիմնավորմամբ, որ Կոնսորցիումի կողմից չի ներկայացվել նմանատիպ պայմանագրի ժամկետի փոփոխման վերաբերյալ հիմնավորում կամ այլ նմանատիպ պայմանագիր:

Այսպիսով, Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 2-րդ կետի 2.5 ենթակետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացվել է «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի և «ԷՄԷՍ Լոգիստիքս» ընկերության միջև 12.04.2019թ. կնքված ապրանքների մատակարարման թիվ MT-2019/05 պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր), Պայմանագրի գնին համապատասխան դուրս գրված հաշիվ-ապրանքագիրը և կողմերի հաստատած Պայմանագրով նախատեսված ապրանքների հանձնման-ընդունման ակտը:

Պայմանագրի 4-րդ կետով սահմանվել է, որ վաճառողը պայմանագրով նախատեսված ապրանքը գնորդին մատակարարում է պայմանագրի կնքման օրվանից հաշված 20 օրվա

ընթացքում: Ընդ որում՝ մատակարարման օր է համարվել հաշիվ-ապրանքագրի դուրս գրման օրը:

Պայմանագրի հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ ապրանքը մատակարարվել է 03.05.2019թ.:

Գնահատող հանձնաժողովը Պայմանագիրը գնահատել է որպես ժամկետի խախտմամբ կատարված, քանի որ Պայմանագրի համաձայն ապրանքի մատակարարման ժամկետը լրանում է 02.05.2019թ., մինչդեռ ապրանքի մատակարարումն իրականացվել է 03.05.2019թ.:

Այս տեսանկյունից գտնում են, որ Կոնսորցիումի կողմից «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար ներկայացված պայմանագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին, հետևյալ պատճառաբանությամբ.

«Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի և «ԷՄԷՍ Լոգիստիքս» ընկերության միջև 12.04.2019թ. կնքված 61 740, 00 եվրո ընդհանուր արժողությամբ ապրանքների մատակարարման թիվ MT-2019/05 պայմանագրով ապրանքների մատակարարման ժամկետ սահմանվել է 20 օրը, միևնույն ժամանակ Պայմանագրի շրջանակներում դուրս գրված թիվ GE0734 հաշիվ-ապրանքագրի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվել են 03.05.2019թ., իսկ ապրանքների հանձնման-ընդունման ակտը կազմվել է 04.05.2019թ.:

Այսպիսով՝ Պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարվել են Պայմանագրով նախատեսված ժամկետից մեկ օր հետո, միևնույն ժամանակ համաձայն հանձնման-ընդունման ակտի, ապրանքները մատակարարվել են պատշաճ Պայմանագրին համապատասխան և սահմանված կարգով ընդունվել են գնորդի կողմից:

Կարգի 61-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող

ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Նման պայմաններում գտնում եմ, որ 12.04.2019թ. կնքված թիվ MT-2019/05 պայմանագիրը Կարգի 61-րդ կետի իմաստով հանդիսանում է պատշաճ կատարված, քանի որ Պայմանագրի կողմ «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել է Պայմանագրով նախատեսված ամբողջ ապրանքը, որը սահմանված կարգով ընդունվել է գնորդ կազմակերպության կողմից, որի վերաբերյալ կազմվել է հանձնման-ընդունման ակտ և դուրս է գրվել հաշիվ-ապրանքագիր: Այսինքն, մատակարար-գնորդ քաղաքացիաիրավական պայմանագրային հարաբերությունների շրջանակներում գնորդի կողմից ընդունելի և պատշաճ է համարվել մատակարարի կողմից պայմանագրով նախատեսված ժամկետից մեկ օր ուշացումով պայմանագրի կատարումը և գնորդը սահմանված կարգով ընդունել է ապրանքները՝ հավաստելով, որ ապրանքները մատակարարվել են Պայմանագրին համապատասխան:

Գտնում եմ, որ «Թեսթինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի և «ԷՄԷՍ Լոգիստիքս» ընկերության միջև 12.04.2019թ. կնքված մատակարարման թիվ MT-2019/05 պայմանագիրը սույն մասով բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի պահանջներին, ուստի գտնում եմ, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 20.08.2019թ. ներկայացված բողոքը բավարարել:

1. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը մերժելու մասին 08.08.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումը և սույն որոշումից հետո Ընթացակարգի 2-րդ, 4-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով հաջորդաբար տեղեր

զբաղեցնող մասնակիցներին փաստաթղթեր ներկայացնելու պահանջի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի որոշումը.

2. Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «Էյջ Զի Էյջ Քոմփանի» ՍՊ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հայտը սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**



ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ